Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր Բ. Մակիչյան
“ ” դեկտեմբերի 2016թ.

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի 2016թ.
դեկտեմբերի 13-ի որոշմամբ (արձ. №19)

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Հյուսիսային համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման, պայմանագրի կնքման ու վերակնքման, արտամրցութային կարգով բացառիկ դեպքերում՝ պաշտոններում նշանակման կարգն ու պայմանները, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների նկարագրությունը:
2. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմը ձևավորվում է մրցութային կամ արտամրցույթային կարգով: Բուհում աշխատանքային հարաբերությունները հաստատվում են պայմանագրային հիմունքներով, սույն ընթացակարգին համապատասխան:
3. Սույն ընթացակարգի ընդունման իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Հյուսիսային համալսարանի կանոնադրությունը, Համալսարանի ներքին իրավական ակտերը, ՀՀ աշխատանքային օրենսդրությունը:
4. Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները իրականացվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

II. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Հյուսիսային համալսարանում սահմանվում են պրոֆեսորադասախոսական կազմի հետևյալ տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս:
6. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման չափանիշներն են

ա) պաշտոնի հավակնորդի բարձրագույն և/կամ հետբուհական մասնագիտական կրթության որակավորումը, գիտական աստիճանը, կոչումը,
բ) մասնագիտական և մանկավարժական պահանջվող հմտությունները,
գ) գիտահետազոտական գործունեության արդյունքները,
դ) որակավորման բարձրացումը և վերաորակավորումը,
ե) ուսանողական հարցման միջոցով դասախոսի գնահատման արդյունքները (առկայության դեպքում),
զ) դասախոսի աշխատանքի գնահատման այլ ձևաչափերը (ինքնագնահատում, գործընկեր դասախոսների և անմիջականղեկավարի կողմից գնահատում) (առկայությանդեպքում):

7. Պրոֆեսորի թափուր պաշտոնին կարող են հավակնել անձինք, որոնք, ունեն դոկտորի գիտական աստիճան և/կամ պրոֆեսորի գիտական կոչում:

7.1. Պրոֆեսորի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.
ա) դասախոսությունների վարում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերով,
բ) ասպիրանտների և հայցորդների ղեկավարում,
գ) գիտական (գիտամեթոդական) սեմինարների վարում,
դ) մագիստրոսական ծրագրի ղեկավարում,
ե) մագիստրոսական ծրագրի գիտական սեմինարի ղեկավարում,
զ) կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում,
է) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,
ը)մասնակցություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին,
թ) քննությունների և ստուգարքների անցկացում,
ժ) դասալսումների անցկացում,
ի) անդամակցություն ֆակուլտետի մեթոդական խորհրդին,
լ) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
խ)մասնակցություն Համալսարանի գիտական խորհրդի աշխատանքներին,
ծ)գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում,
կ) մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր ծրագրերի ու դասընթացների մշակում:

8. *Դոցենտի* թափուր պաշտոնին կարող են հավակնել անձինք, որոնք համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան և/կամ դոցենտի գիտական կոչում

8.1Դոցենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

ա)դասախոսությունների վարում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերով,
բ) ասպիրանտների և հայցորդների ղեկավարում,
գ) մագիստրոսական ծրագրի ղեկավարում,
դ) մագիստրոսական ծրագրի գիտական սեմինարի ղեկավարում,
ե) գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների վարում,
զ)կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում,
է) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,
ը)մասնակցություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին,
թ) քննությունների և ստուգարքների անցկացում,
ժ) ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում,
ի) մասնակցություն Համալսարանի գիտական խորհրդի աշխատանքներին,
լ) անդամակցություն ֆակուլտետի մեթոդական խորհրդին,
խ) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
ծ) գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում:

9. *Ասիստենտի* թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան ավարտած անձինք:

9.1.Ասիստենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.
ա) դասախոսությունների վարում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրով,
բ) գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների վարում,
գ) կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարում,
դ) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,
ե) քննությունների և ստուգարքների անցկացում,
զ) ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում,
է) մասնակցություն Համալսարանի գիտական խորհրդի աշխատանքներին,
ը) անդամակցություն ֆակուլտետի մեթոդական խորհրդին,
թ) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
ժ) գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում :

10. *Դասախոսի* թափուր պաշտոնին կարող են հավակնել համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

9.1.Դասախոսի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.
ա) դասախոսությունների վարում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրով,
բ) գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների վարում,
գ) կուրսային աշխատանքների ղեկավարում,
դ) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,
ե) քննությունների և ստուգարքների անցկացում,
զ)ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում,
է) անդամակցություն ֆակուլտետի մեթոդական խորհրդին,
թ) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
ժ) գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում:

III. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումը իրականացվում է **մրցութապայմանագրային** կամ առանց մրցույթի որոշակի ժամկետով **աշխատանքային** պայմանագրերի կնքման եղանակներով:
12. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների մրցույթների նախապատրաստման և կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով Համալսարանում գործում է մշտական մարմին՝ որակավորման մանդատային հանձնաժողով:
Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Համալսարանում ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը (հանձնաժողովի նախագահ),կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորը, ուսումնական վարչության պետը, կադրերի բաժնի վարիչը (հանձնաժողովի քարտուղար):
13. Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին որակավորման մանդատային հանձնաժողովն ուսումնասիրում և Ռեկտորին է ներկայացնում հաջորդ ուսումնական կիսամյակում պրոֆեսորադասախոսական կազմի թափուր մրցութային պաշտոնների ցանկը:
14. Պաշտոնների տեղակալման համար մրցույթները հայտարարվում են որակավորման մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ, Ռեկտորի հրամանով՝ մինչև ընթացիկ կիսամյակի վերջ: Մրցույթի վերաբերյալ հայտարարությունը կարող է տպագրվել է հանրապետական սփռում ունեցող պարբերական մամուլում և կամ Համալսարանի պաշտոնական կայքում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ներկայացման վայրն ու

վերջնաժամկետը: Մրցույթին մասնակցելու փաստաթղթերն ընդունվում են հայտարարության օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

15. Մրցույթի մասնակիցները, մրցույթի վերաբերյալ հայտարարության օրվանից՝ մեկամսյա ժամկետում ներկայացնում են դիմում՝ Ռեկտորի անունով, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի), գիտական աստիճանի, դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները, հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը, որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականը (առկայության դեպքում): Մրցույթի մասնակիցը կարող է ներկայացնել նաև գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

16. Մրցույթի մասնակիցների փաստաթղթերը որակավորման մանդատային հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են և հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացվում են Ռեկտորին, ում մակագրությամբ փաստաթղթերն ուղարկում են համապատասխան ամբիոնի քննարկմանը:

Դիմումները հանձնաժողովի կողմից ենթակա են մերժման, եթե հավակնորդի տվյալները չեն բավարարում մրցույթի պայմաններին, կամ չի պահպանվել դիմումի ներկայացման ժամկետը:

17. Ռեկտորը, որակավորման մանդատային հանձնաժողովը կամ ամբիոնի վարիչն իրավունք ունեն մրցույթի մասնակցին հանձնարարել փորձնական դասախոսություն, սեմինար կամ գործնական պարապմունքներ: Դասախոսության թեման հանձնարարվում է ամբիոնի կողմից՝ ուսումնական պլանի շրջանակներում:

18. Ամբիոնի նիստում հավակնորդների փաստաթղթերի քննարկման արդյունքում, բաց քվեարկությամբ (եթե այլ որոշում չի կայացվել) ընդունվում է որոշում թեկնածուի կամ թեկնածուների՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու վերաբերյալ, որը ներկայացվում է որակավորման մանդատային հանձնաժողովին: Ամբիոնի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ամբիոնի դասախոսների 2/3-ը: Ամբիոնի նիստում ընդունված է համարվում այն որոշումը, որի օգտին քվեարկել են մասնակիցների կեսից ավելին: Ամբիոնի նիստի արձանագրությունը ներկայացվում է Ռեկտորին, որի հիման վրա Ռեկտորը, դրական եզրակացություն ստացած հավակնորդների հետ կնքում է աշխատանքային պայմանագիր: Միևնույն պաշտոնում մեկից ավելի դրական եզրակացություն ստացած հավակնորդների դեպքում Ռեկտորը հարցազրույց է ունենում հավակնորդների հետ, որի հիման վրա որոշում է կայացնում հավակնորդներից մեկի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին:

IV. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

19. Մրցույթով ընտրված թեկնածուի հետ Ռեկտորը տվյալ պաշտոնի համար նախատեսված ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր, ամբիոնի նիստում որոշման ընդունումից հետո յոթնօրյա ժամկետում:

20. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններում աշխատանքային պայմանագրերը կնքվում են. առաջին անգամ ընտրվելու դեպքում՝ մինչև 3 տարի, այնուհետև՝ 3-5 տարի ժամկետով:Աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետն առաջարկում է որակավորման մանդատային հանձնաժողովը, հիմք ընդունելով թեկնածուի՝ սույն ընթացակարգի 5-րդ կետում պաշտոնի հավակնորդի համար սահմանված չափանիշներին համապատասխանության գնահատման արդյունքները:

21. Ժամավճարով կամ համատեղությամբ դասավանդողների դեպքում, մրցութային ընտրություն չի անցկացվում և նրանք հրամանագրվում են Ռեկտորի կողմից մինչև 1 տարի ժամկետով:

22. Առանձնահատուկ դեպքերում (ուսումնական բեռնվածության և հաստիքների թվաքանակի աճի, որոշակի անձի առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման) պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնում կարող է նշանակում կատարվել առանց մրցութային ընտրության՝ Ռեկտորի հրամանով մինչև 1 տարի ժամկետով:

23. Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա և ամբիոնում համապատասխան հաստիքի առկայության դեպքում, Ռեկտորն իրավասու է պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողի հետ մեկ անգամ կնքել նոր աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության: Այս դեպքում, պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն երկու ամիս առաջ տվյալ պաշտոնը զբաղեցնող անձը՝ սահմանված կարգով ամբիոնին է ներկայացնում հաշվետվություն նախորդ ժամկետում իր կողմից իրականացված գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ:

Ամբիոնը՝ քննարկելով թեկնածուի գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը, ընդունում է համապատասխան որոշում, որը կից փաստաթղթերով ուղարկում է որակավորման մանդատային հանձնաժողովին:

Որակավորման մանդատային հանձնաժողովը, ուսումնասիրելով ներկայացված հաշվետվությունը և ամբիոնի որոշումը, առաջարկություն է ներկայացնում Ռեկտորին տվյալ անձին առանց մրցութային ընտրության որոշակի ժամկետով հրամանագրելու վերաբերյալ:

V. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄԸ

24. Պրոֆեսորադասախոսական կազմում պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել կամ փոփոխվել՝

ուսումնական ծրագրերի փոփոխման կամ ուսանողների թվաքանակի կրճատման դեպքում,

25. պաշտոնը զբաղեցնող անձի մասնագիտական գիտելիքների անբավարարության պատճառով: Այս դեպքում ամբիոնի վարիչը իրավասու է ամբիոնի նիստին ներկայացնելու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցչի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հարցը: Եթե ամբիոնի նիստում սույն ընթացակարգով սահմանված կարգով քվեարկությամբ հաստատվում է զբաղեցրած պաշտոնին տվյալ անձի անհամապատասխանությունը, ապա Ռեկտորը ամբիոնի նիստի արձանագրությունը ստանալուց հետո սահմանված կարգով լուծում է նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Զբաղեցրած պաշտոններին համապատասխանության մասին ամբիոնի նիստին նախորդում է պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցչի աշխատանքային գործունեության ստուգումը ամբիոնի անդամներից կազմված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմը հաստատում է Ռեկտորը:

26. ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Սույն կարգի դրույթները տարածվում են 2017թ. սեպտեմբերի 1-ից հետո պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համար հայտարարվող մրցույթների վրա:

28. Մինչև սույն կարգի ընդունումը Համալսարանի համապատասխան ամբիոններում սահմանված պաշտոններում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի անդամները առանց մրցութային կարգի համարվում են տվյալ պաշտոնում նշանակված երեք տարի ժամկետով, սույն ընթացակարգի չափանիշներին համապատասխանության վերաբերյալ ամբիոնների համապատասխան եզրակացության դեպքում: Սույն կարգով սահմանված չափանիշներին չհամապատասխանող պրոֆեսորադասախոսական կազմի անդամների հետ պայմանագրերը ենթակա են վերափոխման մինչ 2017թ. սեպտեմբերի 1-ը: